Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ ներկայացված Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ապահովագրության համակարգի զարգացումը թույլ է տալիս ստեղծել սոցիալ-տնտեսական զարգացման առավել ճկուն և կայուն տնտեսական մեխանիզմներ: ՀՀ-ում արդյունավետ տնտեսական համակարգի կայացման, հասարակության կայունության ու տնտեսության անխափան կենսագործունեության համար իր կարևոր դերակատարությունն ունի ապահովագրական համակարգի շարունակական զարգացումը: Ապահովագրությունը, լինելով տնտեսության վերարտադրության անընդհատությունը ապահովող գործիք, ինքնին աջակցում է տնտեսական ցնցումների հաղթահարմանը և տնտեսական աճի ապահովմանը:

Ապահովագրական շուկայի զարգացման պետական միջամտության ամենավառ օրինակը պարտադիր ապահովագրատեսակների ներդրումն է: ՀՀ-ում այս պահին առկա ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ-ն) արդեն հասցրել է ապացուցել իր արդյունավետությունը, ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ պետության համար: Ներկայումս ՀՀ կառավարությունը քննարկում է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման տարբեր հայեցակարգեր, որի արդյունավետ ներդրումը պահանջում է առկա հնարավորությունների, ռիսկերի, տնտեսության վրա ազդեցության շրջանակների և հետևանքների համակողմանի ուսումնասիրություն:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել պարտադիր ապահովոգրության ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի վրա՝ գնահատելով պարտադիր ապահովագրատեսակների և ՀՀ տնտեսական զարգացման միջև առկա փոխառնչությունները: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ապահովագրական շուկային և պարտադիր ապահովագրությանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- ուսումնասիրել պարտադիր ապահովագրատեսակների ներդրման մեթոդաբանական հիմնահարցերը, սկզբունքները և խնդիրները,
- հետազոտել ապահովագրական շուկայի և պետությունների տնտեսական զարգացման միջև փոխկապվածությունների համաշխարհային փորձը,
- վերլուծել պարտադիր ապահովագրատեսակների ներդրման և զարգացման միջազգային փորձը,
- ուսումնասիրել ՀՀ ապահովագրական համակարգը և նրա դերը տնտեսության զարգացման համատեքստում,
- ուսումնասիրել ՀՀ առողջապահական համակարգի ֆինանսավորման ներկա վիճակը և բացահայտել զարգացման հիմնախնդիրները,
- վերլուծել պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման նախադրյալները և մշակել ներդրման հայեցակարգ,
- վերլուծել և գնահատել ՀՀ պարտադիր ապահովագրության փաստացի ցուցանիշների ազդեցությունը տնտեսական զարգացման վրա,
- գնահատել պարտադիր բժշկական ապահովագրության ներդարման ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի ապահովման և ապահովագրական շուկայի զարգացման վրա:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Այն շարադրված է 181 մեքենագիր էջերի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության **ներածության** մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեղեկատվական և տեսամեթոդական հիմքերը, ձևակերպված են ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը, ներկայացված են աշխատանքի գիտական և գործնական կիրառման նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումներն ու հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ **«Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման տեսամեթոդական հիմքերը և համաշխարհային ապահովագրական շուկան»** գլխում անդրադարձ է կատարվել ապահովագրական շուկային և պարտադիր ապահովագրության դերին ու առանձնահատկություններին, ինչպես նաև պարտադիր ապահովագրատեսակների ներդրման մեթոդաբանական հիմնահարցերին, սկզբունքներին և խնդիրներին:

Առաջին գլխում ներկայացվել է նաև համաշխարհային ապահովագրական շուկայի դերը ազգային տնտեսությունների զարգացման գործում: Ուսումնասիրվել է համաշխարհային տնտեսական ցուցանիշների փոփոխության դինամիկաները ապահովագրական շուկայի զարգացումների համատեքստում: Հեղինակի կողմից դիտարկվել են համաշխարհային ապահովագրավճարների և ապահովագրական կազմակերպությունների ակտիվների փոփոխության դինամիկաները համաշխարհային ՀՆԱ-ի փոփոխությանը զուգընթաց, ուսումնասիրվել են առանձին պետությունների տնտեսական և ապահովագրական ցուցանիշների հարաբերակցությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Պարտադիր ապահովագրատեսակների զարգացման միջազգային և ՀՀ փորձի գնահատումը»** գլխում, հեղինակը իրականացրել է պարտադիր ապահովագրատեսակների ներդրման, զարգացման միջազգային և ՀՀ փորձի վերլուծություն ու գնահատում: Հանգամանորեն քննարկել է պարտադիր ապահովագրատեսակների զարգացման միջազգային առաջավոր փորձը, որի հետ

համեմատական վերլուծությամբ ներկայացրել է պարտադիր ապահովագրության դերը ՀՀ ապահովագրական համակարգի և տնտեսության զարգացման գործում: Վերլուծության արդյունքում հեղինակը բացահայտել է, որ աշխարհի տարբեր երկրներում կախված սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից և պետությունների որդեգրած քաղաքականություններից գործում են տարբերի ապահովագրական համակարգեր և առկա են զանազան պարտադիր ապահովագրության տեսակներ: Պարտադիր ապահովագրությունները տարբեր են ըստ երկրների, ոչ միայն իրենց տեսակով այլ նաև իրականացման և կանոնակարգման սկզբունքներով, փոխհատուցվող ծառայությունների շրջանակով և ֆինանսավորման եղանակներով:

Գագիկ Հակոբյանի կողմից իրականացված ՀՀ ապահովագրական ընկերությունների տնտեսական գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ արտաքին շոկերի հանդեպ ապահովագրական շուկան կայուն է և ունի ազատ դրամական զանգվածի արդյունավետ կառավարման մեխանիզմներ և կարող է հանդիսանալ տնտեսությանը աշխուժացնող լծակ:

Ատենախոսության երրորդ՝ **«Պարտադիր ապահովագրական համակարգի զարգացման հեռանկարները և կատարելագործման ուղիները ՀՀ-ում»** գլխում հեղինակի կողմից իրականացվել է ՀՀ պարտադիր ապահովագրության փաստացի ցուցանիշների ազդեցության գնահատում և վերլուծություն, նաև մշակվել է պարտադիր բժշկական ապահովագրության (ՊԲԱ) ներդարման և իրականացման մեխանիզմներ, կատարվել է մշակված հայեցակարգի ազդեցության գնահատում ՀՀ տնտեսական աճի ապահովման և ապահովագրական շուկայի զարգացման վրա:

Երրորդ գլխի շրջանակում հեղինակի կողմից կատարված էկոնոմետրիկ վերլուծությունները ցույց են տվել, որ պարտադիր ապահովագրատեսակները ունեն դրական ազդեցություն ՀՆԱ-ի վրա և հանդես են գալիս, որպես տնտեսական աճի ապահովման բաղադրիչ: Արդյունքում բացահայտվել է, որ նոր պարտադիր ապահովագրության ներդրումը կունենա դրական ազդեցություն տնտեսական աճի ապահովման գործընթացում: Հեղինակը, օգտվելով ակտուարական հաշվարկների տրամաբանությունից, նաև գնահատել է պարտադիր բժշկական ապահովագրության ներդրման ֆինանսական բեռը և հաշվարկել

դրա փուլային ներդրման տնտեսական հետևանքները՝ իրականացնելով ռեգրեսիոն վերլուծություն:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում համառոտ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրահանգումները և առավել առարկայական առաջարկները:

<u>Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը</u>

Սույն հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսական զարգացման և պարտադիր ապահովագրության միջև փոխառնչությունն է, իսկ առարկան՝ ՀՀ տնտեսական աճի և ապահովագրական շուկայի զարգացման վրա պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցության գնահատումը:

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ՀՀ և այլ պետությունների օրենքները, Կառավարության որոշումները, օրենսդրական նախագծերը և այլ ակտերը, Համաշխարհային բանկի, Եվրոպական Կենտրոնական բանկի, ՀՀ ԿԲ-ի, Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության, Միջազգային վիճակագրական կազմակերպության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, տարբեր պետությունների վիճակագրական կոմիտեների զեկույցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը և ՀՀ վիճակարգրական կոմիտեի տվյալների բազաները:

Հետզոտության հիմքում առաջադրված առանձին հիմնախնդիրների պարզաբանման նպատակով կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեկնաբանման և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Վերջինս ներառում է ոչ պարամետրական թեստերի, կատեգորիկ փոփոխականների անկախության ստուգման թեստերի և ժամանակային շարքերի տվյալների վերլուծություն, ինչպես նաև ռեգրեսիոն մոդելի կիրառություն:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ՝

1. Էկոնոմետրիկ վերլուծությունների օգնությամբ գնահատվել են ՀՀ ապահովագրական շուկայի և տնտեսական աճի միջև առկա փոխկապվածությունները, որոնց արդյունքում բացահայտվել է միակողմանի ազդեցություն կամավոր ապահովագրության և երկկողմանի պատճառահետևանքային փոխկապվածություն պարտադիր ապահովագարության ու տնտեսական զարգացման միջև:
2. Բացահայտվել է ՀՀ պարտադիր ապահովագրության և տնտեսական աճի միջև փոխկապվածությունների լոգարիթմական բնույթը: Հետագա ռեգրեսիոն վերլուծությունների արդյունքում կառուցվել է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և մեկ անձի հաշվով պարտադիր ապահովագրության ապահովագրավճարների լոգարիթմական հավասարումը, որը թույլ է տալիս տրված մեկ անձի հաշվով պարտադիր ապահովագրության ապահովագրավճարների մեծության պարագայում կանխատեսել տվյալ տարվա մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն:
3. Գնահատվել է ՀՀ առողջապահության ոլորտի ֆինանսավորման և պետական բյուջեի ու մի շարք այլ մակրոտնտեսական ցուցանիշների միջև փոխկապվածությունը՝ բացահայտելով բարձր կոռելացվածություն մակրոտնտեսական ցուցանիշներից և ցածր զգայնություն բնակչության առողջապահական ծախսերից:
4. Բացահայտվել է, որ ապահովագրական ընկերությունների շահութաբերության և ֆինանսական կայունության վրա ազդող հիմնական գործոնը ներդրումային գործունեությունն է, որպես ապահովման հենք հիմնավորվել են ԱՊՊԱ-ից և առողջության ապահովագրութունից գոյացող ապահովագրավճարները և տեխնիկական պահուստները: Ապահովագրավճարների շարունակական մուտքը նույնիսկ տնտեսական անկման պարագայում թույլ է տալիս ապահովագրողներին կատարել ներդրումներ այն ժամանակ, երբ մյուսները կորցնում են: Ապահովագրավճարների շարունակական հոսքը թույլ է տալիս ապահովագրողներին

հանդես գալ այն ակտիվների բնական գնորդ, որոնք թերագնահատվել են անկման շրջանում: Նրանց ներդրումային ռազմավարությունները, հատկապես երկարաժամկետ գործունեության համար, թույլ են տալիս տնտեսության կայունացնողի դեր խաղալ:

5. Մշակվել է պարտադիր բժշկական ապահովագրության փուլային ներդրման հայեցակարգ՝ միաժամանակ գնահատելով համակարգի ներդրման ֆինանսական բեռը և միավոր ապահովագրավճարը:

<u>Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ</u>

1. Ատենախոսության առաջին գլխի 1.3 պարագրաֆի շրջանակներում ատենախոսը ուսումնասիրել է համաշխարհային ապահովագրական շուկայի դերը ազգային տնտեսությունների զարգացման գործում, որից հետո երկրորդ գլխի առաջին պարագրաֆի շրջանակներում շարունակել միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ անդրադառնալով պարտադիր ապահովագրատեսակների ներդրման և զարգացման տարբեր երկրների փորձի համեմատական վերլուծությանը, սակայն չի իրականացրել համապատասխան ապահովագրատեսակների տնտեսական ազդեցության գնահատում: Ատենախոսությունը առավել կշահեր, եթե հեղինակն իրականացներ նաև տարբեր երկրներում պարտադիր ապահովագրատեսակների ազդեցության գնահատում տվյալ երկրների տնտեսության զարգացման վրա, որի արդյունքում կարող էր ձևավորվել միջազգային լավագույն փորձ վերլուծություն և ՀՀ-ում ներդրման հնարավորության դիտարկում:

2. Էջ 102-104-ում ատենախոսը ներկայացնում է ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեությունը 2017-2023 թվականների համար, որից պարզ է դառնում որ ապահովագրական ընկերությունները իրենց ներդրումների 34%-ը իրականացնում են արժեթղթերում, որոնց գրեթե 99%-ը պետական պարտատոմսերն են, ինչը փաստում է այն մասին, որ ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեությունը չի ծառայում տնտեսության ֆինանսավորմանը, այլ իրականացնում է մեծամասամբ պետական պարտքի ֆինանսավորում: Աշխատանքը առավել կշահեր, եթե

հեղինակը ուսումնասիրեր ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեության արդյունավետությունը, տնտեսական հետևանքների բարելավման հնարավոր ուղղությունները և ներկայացներ դրանց համար անհրաժեշտ գնահատականներ:

3. Ատենախոսությունում հեղինակի կողմից առաջադրված թվով չորրորդ գիտական նորույթը դժվար ըմբռնելի է և կարիք ունի վերաձևակերպման: Այն, ըստ էության, իրենից ներկայացնում է ապահովագրական գործունեության վրա հատկանշական ֆինանսական ազդեցություն ուեցող գործոնի բացահայտում, սակայն ձևակերպումը բավականին խճճված է և անհասկանալի, ուստի վերձևակերպման կարիք ունի:

4. Ատենախոսության 3-րդ գլխում հեղինակն իրականացրել է մի քանի էմպիրիկ վերլուծություններ՝ կիրառելով էկոնոմետրիկ մոդելներ և վերլուծական մեթոդներ, որոնց հիման վրա կառուցել է ռեգրեսիոն հավասարում, որը թույլ է տալիս մեկ անձի հաշվով պարտադիր ապահովագրավճարների տրված մեծության շնորհիվ կանխատեսել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունը: Աշխատանքը առավել կշահեր, եթե հեղինակը ռեգրեսիոն հավասարման մեջ ներառեր ֆինանսական շուկաների ազդեցության այլ ցուցանիշներ ևս, մասնավորապես իրական կամ վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որոնք կօգնեին առավել համապարփակ գնահատել ստացված արդյուքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերոնշյալ դիտողությունները էապես չեն ազդում ատենախոսության արդյունքների վրա: **Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա»** թեմայով ատենախոսությունը կարող է որակվել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որում առկա են այնպիսի հարցադրումներ, գաղափարներ և եզրահանգումներ, որոնք գիտական հետաքրքրություն ունեն մասնագիտական շրջանակների համար և կարող են օգտակար լինել գործնական կիրառության համար:

Հետազոտության հիմնական արդյունքները և քննարկված հիմնախնդիրները արտացոլված են ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից սահմանված հրատարակություններում հեղինակի

կողմից հրատարակված թվով 11 (տասնմեկ) գիտական հոդվածներում, որոնք ներկայացված են առաքված սեղմագրում:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը և հիմնականում արտացոլում դրա դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, **Գագիկ Մուշեղի Հակոբյանի «Պարտադիր ապահովագրատեսակների ներդրման ազդեցությունը ՀՀ տնտեսության և ապահովագրական շուկայի զարգացման վրա» թեմայով ատենախոսությունն** ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն, արժանի է Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
ՀՊՏՀ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ **Հ.Գ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

15 հունիսի 2024թ.

Հ.Գ.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ն.Հ.ԴԱՐԲԻՆՅԱՆ**

15 հունիսի 2024թ.